




Մահագրորթիւն

**ԱՇՈՏ Գ.
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

(1887 – 1972)

Աշոտ Գ. Յովհաննիսեան ծնած է Շուշի, 1887 թ.ի Յունիսի 17-ին: Տեղւոյն վրայ նախնական ու երկրորդական ուսումը ստանալէ ետք, 1896 թ.ին կը մեկնի Գերմանիա, ուր իր ուսումը կը շարունակէ Ենայի, Հալլէի եւ Միւնխենի համալսարաններուն մէջ: 1913 թ.ին Միւնխենի համալսարանէն կը ստանայ փիլիսոփայական դիտութիւններու դոկտորի աստիճանը: 1913–1914 թթ.ուն կը պաշտօնավարէ Շուշիի հայկ. հոգեւոր կրթական հաստատութեան մէջ, իսկ 1914–1917 թթ.ուն՝ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի մէջ, ուր դասախօսական աշխատանքներու կողքին կը ձեռնարկէ պատմագիտական հետազոտութեանց, որոնց արդիւնքները կը հրատարակէ Էջմիածնի Արարատ ամսագրին մէջ, եւ առանձին գրքոյկներով:


1921–1927 թթ.ուն, որպէս դասախօս, Ա. Գ. Յովհաննիսեան կը պաշտօնավարէ Երեւանի համալսարանին մէջ: 1927–1937 թթ.ուն, ան կ'աշխատի Լենինկրատի եւ Մոսկուայի շարք մը գիտական հիմնարկներու մէջ: 1954 թ.ին, ան աւագ գիտաշխատող է Հ.Ս.Ս.Հ. Գիտութիւններու Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի մէջ:

1955 թ.ին կը ստանայ պատմական գիտութիւններու դոկտոր աստիճանը: 1960 թ.ին, կ'ընտրուի Հ.Ս.Ս.Հ. Գիտութիւններու Ակադեմիայի ակադեմիկոս: 1967 թ.ին, իր ծննդեան 80-ամեակին առիթով, Ա. Գ. Յովհաննիսեան կը պարգևատրուի Լենինի շքանշանով:

Ա. Գ. Յովհաննիսեան կը հանդիսանայ վերջին յիսնամեակի ամենէն բեղուն գրելներէն մէկը հայ պատմագրութեան: Անոր զբոսն կը պատկանին ԻՍՐԱԵԷԼ ՕՐԻՆ ԵՒ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ (Մուսիսէն, 1913)՝ գերմաներէն լեզուով գրուած մենագրութիւնը, ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՐԱՖԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԺԹ. ԴԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄԵԱԿԻՆ՝ ուսերէն լեզուով հրատարակուած փաստաթուղթերու ընդարձակ ներածութիւնը, ՀԱՅ-ՌՈՒՍ ՕՐԻՆԵՆ-ՏԱՅԻԱՅԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ (Էջմիածին, 1921), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅՈՒԼԻՍԵՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՐԻՋԻՍԸ, ԱՐՈՎԵԱՆ (Երեւան, 1933), ՖՐԻԿԸ ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ ԼՈՅՍԻ ՏԱԿ (Երեւան, 1955) աշխատութիւնները եւ դեռ բազմաթիւ գիտական մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ: 1969 թ.ին (Երեւան) լոյս կը տեսնէ անոր ՅՈՒՇԵՐ ԵՒ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ ՀԱՏԵԿԱՆ ԳՐԹԸ, ուր հեղինակը ընթերցողին կը ներկայացնէ վերջին յիսնամեակին հայ պատմագրութեան ծանօթ դէմքերէն ոմանք, անոնց դործերովն ու աշխարհահայեացքովը: Նոյնպէս իր գրչին կը պատկանին ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ութհատորեակի վերջերս հրատարակուած (Երեւան, 1972) Դ. հատորի Գ. գլուխը՝ Հայաստանի Գաղափարական Վիճակը Սեփեան Իրանի եւ Օսմանեան Թուրքիայի Տիրապետութեան Տակ (էջ 81-133) եւ Դ. գլուխի (Հայ Ազատագրական Շարժումը Իրանական Տիրապետութեան եւ Թուրք Զաւթիչներին դէմ ԺԸ. դարի Առաջին կէտում) առաջին հինգ հատորածները (էջ 134-175):

Ա. Գ. Յովհաննիսեանի պատմագրական վաստակին փառքն ու պսակը կը կազմեն սակայն անոր երկու կոթողային աշխատասիրութիւնները՝ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ, Ա. հտոր. (Երեւան, 1955), Բ. հտոր., (Երեւան, 1956) եւ ԴՐՈՒԱԳՆԵՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, Ա. հտոր. (Երեւան, 1957), Բ. հտոր. (Երեւան, 1959), որոնք վստահօրէն հայ պատմագրութեան ամենէն մնայուն գործերու շարքին կարելի է դասել:

Աշոտ Յովհաննիսեան կը մեռնի 1972 թ.ի Յունիսի 30-ին:




**ՀԱՅԿԱԶՆ Գ.
ՂԱԶԱՐԵԱՆ**

(1892 - 1972)

Հայկազն Գ. Ղազարեան ծնած է Սերաստիա, 1892 թ.ի Մայիսի 20-ին: Տեղւոյն աղւային Արամեան վարժարանը աւարտելէ ետք, կը հետեւի Ֆրանսական Գոլէժ տէ Բառանք Մարքիլի դասընթացներուն: Ապա՝ կը հետեւի Կ. Պոլսոյ պետական համալսարանի իրաւաբանական եւ օտար լեզուներու ճիւղերուն, զորս կ'աւարտէ 1914 թ.ին, ու կը մտնէ Պաքիստի Սպայից վարժարանը: Որպէս մարզիչ կը պաշտօնավարէ Էտերնէի մէջ: Ապա երեք տարիներ կը ծառայէ անգլիական ծովային հրամանատարութեան կեդրոնին մէջ, որ այդ ատեն կը զտնուէր թրքական ծովային նախարարութեան չէնքին մէջ: Այստեղ Հայկազն Գ. Ղազարեան առիթը կ'ունենայ ծանօթանալու թրքական չարք մը փաստաթուղթերու, որոնք կը մերաբերէին հայերու հալածանքին, հայ սպաններու եւ ղինուորներու տարապրութեան եւ սպանութեան, անոնց ընտանիքներուն տարապրութեան, թուրք ղինուորականներու կողմէ հայոց տուններու դրաման, եւլն., ինչպէս նաեւ միջ-նախարարական շրջաբերականներու: Հայկազն Գ. Ղազարեան ապա կ'անցնի Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր մէկ քանի տարիներ Նիւ Եորքի մէջ աշխատելէ ետք կը փոխադրուի Պոսթըն, ուր մօտաւորապէս 30 տարիներ կ'աշխատի Հայրենիքի մէջ, նախ՝ որպէս խմբադրական մարմնի անդամ, ապա՝ վարչական ժողովի:

Երիտասարդ Թուրքերու քաղաքական գործունէութեան մասին իր ունեցած խոր ծանօթութիւնը, ինչպէս նաեւ իր տրամադրութեան տակ գտնուող բազմաթիւ փաստաթուղթերը, մեծապէս կը նպաստեն Հայկազն Գ. Ղաղարեանի՝ զինուած իրաւաբանական ուսումով եւ բազմաթիւ լեզուներու ծանօթութեամբ, ձեռնարկելու Երիտասարդ Թուրքերու հայաստան քաղաքականութիւնը փաստերու լոյսին տակ քողազերծելու աշխատանքին: Տարիներու ընթացքին այս ուղղութեամբ զրած անոր ուսումնասիրութիւններն ու սերտողութիւնները կ'ամփոփուին ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐԲԸ (Պէյրուք, 1968) խորագրով հատորին մէջ:

Հայկազն Գ. Ղաղարեան կը մեռնի 1972 թ. Սեպտ. 21-ին:



**Հ. ԵՓՐԵՄ ՎՐԴ.
ՊՕՂՈՍԵԱՆ**

(1897 – 1972)

Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեան, մկրտութեան անունով Սարգիս, ծնած է Ախալցխայի նահանգին Խաչուտ (Աբաթխեւ) գիւղը, 1897 թ. Մարտի 14-ին: 1910 թ. ին, պատանի Սարգիս իր հօրը ձեռքով կը բերուի Կ. Պոլիս եւ կը յանձնուի տեղւոյն Մխիթարեան հայեր-րուն, որոնք, նոյն տարին իսկ զայն կը զրկեն Վիեննա, ուր ան իր

միջնակարգ ու բարձրագույն ուսումը ստանալէ ետք, 1916 թ.ի Մայիսի 27-ին կը նուիրուի վանական կեանքին, վերանուանուելով Եփրեմ: 1917 թ.ի Նոյ.ի 21-ին պաշտօնապէս կ'անդամակցի Մխիթարեան Միաբանութեան: Ան կը հետեւի փիլիսոփայական ու աստուածաբանական դասընթացներու, իսկ 1921 թ.ի Դեկտ.ի 24-ին կը ստանայ քահանայական ձեռնադրութիւն, որմէ ետք զլիսաւորաբար կը նուիրուի կրթական ու բանասիրական աշխատանքի: Որպէս ուսուցիչ, քսան տարիներ կը ծառայէ Պլովդիւի (Պուլկարիա) Մխիթարեան Վարժարանին մէջ: 1948 թ.ին կը վերադառնայ Վիեննա, ու ինքզինք կը նուիրէ Հայ Մշակութային Միութիւններու ինչպէս նաեւ ծանօթ Հայ գերդաստաններու պատմութեան սերտողութեան: Կարճ ժամանակի մը համար (1966-1969 թթ.), միշտ կրթական դործով, Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեան կը հաստատուի Պէյրութ, ապա կրկին վերադառնալու համար Վիեննա:

Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեանի գրչին կը պատկանին բազմաթիւ գրախօսականներ (զլիսաւորաբար նուիրուած հայրենակցական միութիւններու կողմէ հրատարակուած հայկական քաղաքներու եւ շրջաններու պատմութեան), հայոց լեզուի քերականութեան դասագիրքեր, եւ շարք մը մենագրութիւններ, որոնցմէ առանձին հատորներով ցարդ հրատարակուած են. ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ ՏԱԻՈՒՏԵԱՆ (Վիեննա, 1949), ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ԵՒ ԹՆԿԸՐԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐԸ (Վիեննա, 1951), ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ՏՕՆԸ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅՈՑ ՔՈՎ (Վիեննա, 1952), ՈՍԿԱՆ ԵՒ ՄԸՍԸՐԼԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐԸ (Վիեննա, 1953), ՀԱՅ ԽՄԲԱԳՐՈՒՀԻՆԵՐ, ՈՒՍՈՒՄ-ՆԱՄԻՐՈՒԹԻՒՆ ԻՐԵՆՑ ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ԳՈՐԾԻՆ ՄԱՍԻՆ (Վիեննա, 1953), ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՎԻՃԱԿԱՆԱՂԸ (Վիեննա, 1956), ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ (Վիեննա, 1957), ԿԻՕԶԷՅԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ (Վիեննա, 1961), ՊԻԼԵՁԻԿՃԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ (Վիեննա, 1963), ՏԱՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ (Վիեննա, 1968), ՏԱՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ (Պէյրութ, 1970), ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, Ա. հար. (Վիեննա, 1957), Բ. հար. (Վիեննա, 1963), Գ. հար. (Վիեննա, 1969): Շուտով լոյս կը տեսնէ նաեւ ՊԱԼԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ: Տակաւին մշակովի կարօտ՝ իրմէ կը մնայ նաեւ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեան կը վախճանի 1972 թ.ի Մայիսի 20-ին:


ՅԱԿՈՐ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ

(1879 – 1972)



Յակոր Տէր Մելքոնեան ծնած է Այնթապ, 1879 թ.ի Նոյեմբերին: Նախնական ուսումը ստացած է Այնթապի Վարդանեան Վարժանին մէջ: 1895 թ.ին կը սկսի յաճախել Կեդր. Թուրքիոյ Գուլէճը, սակայն ստիպուած կ'ըլլայ կէս ձգել ուսումը: Երկու տարի որպէս ուսուցիչ կը պաշտօնավարէ Այնթապի մէջ, ու ապա՝ կը նուիրուի առեւտրական ասպարէզին: Ասպարէզին պարտադրանքով, ինչպէս նաեւ քաղաքական դէպքերու բերումով կը մեկնի Ալեքսանտրէթ, ապա՝ Տէօրթ-Եոլ, կրկին վերադառնալու համար Այնթապ, յետոյ Հալէպ, ուրկէ՝ 1928 թ.ին վերջնականապէս կը տեղափոխուի Պէյրութ: Յակոր Տէր Մելքոնեան ունեցած է կրթական, հասարակական եւ ազգային բեղուն դործունէութիւն: Հակառակ իր առեւտրական ասպարէզին, ան միշտ մօտ եղած է մտաւորական կեանքին, եւ իր ուժերուն ներած չափով զբաղած է հայ պատմադրութեամբ: Պատմադրական իր աշխատանքին արդասիւքը եղած են ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՍՄԲԱՏՆԵՐ (Պէյրութ, 1960) ընդարձակ մենագրութիւնը, ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ (Անթիլիաս, 1968) եւ ՔԱՐԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱՆ (Պէյրութ, 1971) փոքրածաւալ աշխատութիւնները:

Կը մեռնի Պէյրութ, 1972 թ.ի Նոյեմբերի 28-ին:



ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ

(1912 - 1972)

Հայկ Գասպարեան ծնած է Սուտան, 1912 թ.ին։ Ան իր երկրորդական ուսումը կը ստանայ Գահիրէի Պէրպէրեան Վարժարանին մէջ։ 1944-1948 թթ., որպէս ազատ ունկնդիր կը հետեւի Լոնտոնի Համալսարանի դրականութեան դասընթացներուն։ 1948 թ.ին կը տեղափոխուի Երեւան, ուր կը սկսի հետեւիլ տեղւոյն Օտար Լեզուներու Ինստիտուտի դասընթացներուն, զոր կ'աւարտէ 1952 թ.ին։ 1953-1955 թթ., որպէս անդլերէն լեզուի դասախօս ան կը պաշտօնավարէ Երեւանի Փոլիտեխնիկական Ինստիտուտի մէջ։ 1956 թ.ին կ'անցնի Գիտութիւններու Ակադեմիա, ուր, նախ կ'աշխատի Գրական Թանգարանին եւ ապա՝ Գրականութեան եւ Արուեստի Ինստիտուտներուն մէջ։ Ակադեմիայի մէջ Հ. Գասպարեան կը նուիրուի հայ-Ֆրանսական գրական եւ մշակութային կապերու ուսումնասիրութեան։ ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՈՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ուսումնասիրութեան համար կ'արժանանայ բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճանին։ Վերոյիշեալ իր մենագրութիւնը կը հրատարակուի 1963 թ.ին։ Սովետահայ գրական եւ գիտական մամուլին մէջ Հայկ Գասպարեան բազմաթիւ յօդուածներ ստորագրած է, նուիրուած՝ հայ-Ֆրանսական մշակութային եւ գրական կապերու։ Կը մեռնի 1972 թ.ին, Երեւան։

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(1898 - 1972)



Նշան Պէշիկթաշլեան ծնած է Բերա (Կ. Պոլիս), 1898 թ.ին: Յաճախած է Բերայի նախակրթարաններէն մին, բայց չէ աւարտած: Այնուհետեւ ոչ մէկ կրթական օճախ մտած է: Հազիւ 10-12 տարեկան, կը սկսի գրական փորձերու: Ապա կ'անցնի Բարիզ (Ֆրանսա), ուր կը մնայ մինչեւ իր մահը:

Բազմաբեղուն գրող, Նշան Պէշիկթաշլեանի գրչին կը պատկանին բանաստեղծութեան, վէպի, դրամատուերներու եւ երգիծական էջերու բազմաթիւ հատորներ: Ան կանուխէն հետաքրքրուած է թատրոնով, ու շրջան մըն ալ ծառայած է հայ բեմին: Անոր այս հետաքրքրութիւնն է որ զինք կը մղէ հայ թատերական դէմքերու ուսումնասիրութեան աշխատանքին ձեռնարկելու: Այս գծով անոր տարած տարիներու վաստակը կ'ամփոփուի ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԻՄՔԵՐ (Անթիլիաս, 1969) խորագիրը կրող հատորին մէջ: Այս ընդարձակ հատորը (1140 էջ) կարեւոր ներգրում մըն է հայ թատրոնի պատմութեան:

Նշան Պէշիկթաշլեան կը մեռնի 1972 թ.ի Սեպտեմբերի 7-ին:



ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(1898 – 1972)

Արամ Երեմեան ծնած է Փոքր Հայքի Մարզուան քաղաքին մէջ, 1898 թ.ին: Իր նախնական եւ միջնակարգ ուսումը ստանալէ ետք ծննդավայրի Սահակեան վարժարանին մէջ, կ'անցնի Անգարա, հետեւելու համար տեղւոյն պետական մանկավարժական ուսումնարանի դասընթացներուն: 1914 թ.ին կը մեկնի Կալկաթա, տեղւոյն Մարդասիրական Ճեմարանին մէջ շարունակելու համար իր ուսումը: 1920–1924 թթ.ուն, Վիեննայի մէջ կը ստանայ համալսարանական իր կրթութիւնը, հետեւելով լեզուաբանութեան ու պատմութեան դասընթացներուն: 1925–1929 թթ.ուն, Երեւանի մէջ ան կ'աշխատի որպէս ուսուցիչ, եւ Պետական Թանգարանի պատմութեան եւ գրականութեան բաժիններուն մէջ՝ որպէս գիտաշխատող: 1929–1947 թթ.ուն, Նոր Զուղայի եւ ապա Թեհրանի մէջ կը շարունակէ իր ուսուցչական ասպարէզը: 1950–1958 թթ.ուն, միշտ որպէս ուսուցիչ, կը մնայ Ռեշտի մէջ, որմէ ետք, մինչեւ 1969 թ., կրկին կրթական պաշտօնով՝ կը մնայ Փեհլեւի: 1969 թ.էն սկսեալ, մինչեւ իր մահը, ան կը պաշտօնավարէ Սպահանի Հայագիտական Ամբիոնին մէջ, որպէս դասախօս:

Մեծ է Արամ Երեմեանի վաստակը որպէս խմբագիր, բանասէր եւ գեղարուեստագէտ: 1926–1928 թթ.ուն, Երեւանի մէջ կը խմբա-

գրէ «Արուեստ» նկարչական-երաժշտական հանդէսը: 1926 թ.ին կը խմբագրէ «Հայաստանի նկարիչներու Ալմամախ»ը, որ կը հրատարակուի Բարիդի մէջ: 1927 թ.ին կը խմբագրէ «Հայ նորագոյն կուլպրգիտութեան»ը, որ կը հրատարակուի Վենետիկի մէջ:

Արամ Երեմեան ամբողջ կեանք մը կը նուիրէ ուսումնասիրելով հայ աշուղները, հայկական թատրոնը, նկարչութիւնն ու երաժշտութիւնը: Այս դժով անոր գրչին կը պատկանին 41 մեծ ու փոքր հատորներ, որոնք հրատարակուած են 1919-1971 թթ.ու միջեւ, որոնց մէջ առանձնապէս ուշադրութեան արժանի պէտք է նկատուի ՍՊԱՀԱՆԻ ՓԷՐԻԱ ԳԱԽԱՌԸ (Նոր-Ջուղա, 1919), ՉԱՐՄԱՀԱԼԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ (Վիեննա, 1923), ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (Վենետիկ, 1933), ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ 17-ՐԴ ԴԱՐԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՉԱՆԸ (Նիւ Եորք, 1944), ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԻՇԱԿ (Իսթանպուլ, 1952), ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ (Երուսաղէմ, 1955), ՀԱՅ ԲԵՄԻ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԱՐՏԻՍՏՆԵՐԸ (Վենետիկ, 1958), եւն.:

Արամ Երեմեան կը մեռնի Նոր Ջուղա, 1972 թ.ի Մարտի 6-ին:

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ

